# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

# ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

11.06.2018թ.

N_29_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքապետարանի 04.04.2018թ-ի ավագանու 3-րդ նիստի թիվ 10,11, որոշումները:

Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__04__» _____04____2018թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 3-ՐԴ ՆԻՍՏԻ N 10, 11 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

04.04.2018թ. ՆԻՍՏ N 3

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարքնի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն` Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 4 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր երկու հարցից:

1.Համայնքին «Ճալլա» Կոչվող տարածքին հանդապահ նշանակելու մասին:

Զեկուցող` Ս. Գալստյան:

2.Խաչաղբյուր համայնքի մշակույթի տան տարածքի վերանորոգման համար գումար տրամադրման մասին:

Զեկուցող` Ս. Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տ. Գաբոյան
2. Ա. Գաբոյան
3. Գ. Խաչատրյան
4. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱԶԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 10

Լսեցին-1.Համայնքին «ճալլա» Կոչվող տարածքին հանդապահ նշանակելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ Խաչաղբյուր համայնքապետարանի խոտհարքներն ու հացահատիկի ցանքատարածությունները գտնվում են հարևան համայնքներին հարող սահմանային մասերում, որոնք մշտապես արածեցվում են տվյալ համայնքների անասունների կողմից: Խնդիրը բարդանում է համայնքի անբարեխիղճ անասնապահների պատճառով, որոնք առավել ուշադիր չեն հանրային դաշտերի ու ցանքատարածությունների պահպանությանը ու անասուններին մեծամասամբ դաշտ են թողնում առանց հսկողության:

Զեկուցողը առաջարկեց մինչև հունձը նշանակել հանդապահ:

Ներկայացված հարցի վերաբերյալ իր կարծիքը հայտնեց նաև գ/պ աշխատակազմի քարտուղար Ն. Զաքարյանը՝ հավելելով, որ հանդապահ նշանակելու խնդրանքով համայնքապետարան են դիմում նաև համայնքի շատ բնակիչներ:

Քննարկումից հետո ավագանին

որոշեց՝

Համաձայնություն տալ մինչև բերքահավաքի ավարտը Խաչաղբյուրի ճալա կոչվող տարածքին հանդապահ նշանակել Եղիազարյան Հայկազին՝ աշխատավարձը սահմանել նվազագույն աշխատավարձի չափով: Վճարումը կատարել մայիսի 1-ից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Վ. Խաչատրյան | | |
| Տ. Գաբոյան | | |
| Ա. Գաբոյան | | |
| Գ. Խաչատրյան | | |
| Պ. Զաքարյան | | |

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 11

Խաչաղբյուր համայնքի մշակույթի տան տարածքի վերանորոգման համար գումար տրամադրման մասին:

Զեկուցողը ներկայայացրեց. որ Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամի ներդրում` Դրամաշնորհի միջոցով վերանորոգվելու է մշակույթի տունը, ուստի անհրաժէշտ է համայնքի բյուջեից ներդնել 1,025,372 ՀՀ դրամ մշակույթի տան վերանորոգման համար:Ծրագրի ղեկավար Վախթանգ Մարտիրոսյան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ`

1.Համայնքի բյուջեից մշակույթի տան վերանորոգման համար ներդնել 1,025,372 ՀՀ դրամ :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Տ. Գաբոյան | | |
| Ա. Գաբոյան | | |
| Գ. Խաչատրյան | | |
| Պ. Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան